

ՀՐԱԺԵՇՏ ԱՌ ՄՈՒԶՈՅՆ

Աստուածութիւնդ, որ մանկական հասակիս աւուրց վերայ հսկեցիր, դեռաբուսիկ որդի երեւակայութեան, ժամ է որ իրարմէ բաժնուինք, թող ուրեմն հողմունք իրենց թեւոցը վրայ առնուն տանին այս երգըս, որ վերջինը պիտի ըլլայ. սրտիս այս զեղումը ցրտագին քան զամենայն:

Այս սիրտը, որ անդգայ է արդ զմայլման, լռել պիտի հրամայէ քու յաւընալ նուագացդ, և ակ քեզմէ երգ չ'ալիտի խնդրէ. Պատանեկութեանս իմ զգացմունք, որք 'ի վեր բռնած էին քու թռիչքդ թմբուութեան թեւոցը վերայ, ինձմէ 'ի բաց վարատեցան:

Քանի փանաքի ալ ըլլան առարկայք, որք իմ կոշտ քնարս կը հնչեցնէին, տառակայք այն աներեւոյթ եղած են յաւէտ: Աչքերն որք իմ երազներս կը ներշնչէին, դադրած են փայլելէ, և իմ տեսիլքս մէկնած են, աւանդ, ակ եւս չդառնալու համար: Երբ քամուած է նեկտարն՝ թաթաղուն 'ի բաժակին, ինչու ոյլ եւս 'ի զուր խնջոյից ուրախութիւնը երկարել, երբ ցուրտ է և սառնագին դեղեցկութիւնն որ կապրէր հոգւոյս մէջ, որ զօրութիւնն երեւակայութեան կարող է երգերուս վերստին կենդանութիւն սրարգեւել:

Երթունքս կրնամ խօսիլ սիրոյ վրայ՝ միայնութեան մէջ, համբոյրներու և ժպիտներու վրայ. որոց պէտք է վերջին մնաք բարեաւն ըսելը Արնան նորա բարբառել հրճուանք սահեցեալ ժամերու վերայ: Ահ, բաւ, զի այն ժամք ակ իմն չեն:

Կամ թէ բարեկամաց վրայ խօսին որոց 'ի գործը նուիրած էի կեանքս,

Ահ, բարեկամութիւնը անշուշտ պիտի վսեմացնէր իմ երգերս, բայց ինչ համակրութիւն կրնան զարթուցանել քերթուածքս նոցա սրտին մէջ, զորս հաղիւ հաղ ոյլ եւս տեսնել կը յուսամ:

Հարցս սիրադործութիւնքը ճառեմ, և տաւղիս աղու աւաչքն նուաժողքը հաշակելու նուիրեմ, բայց քանի տկար է ձայնս այսպիսի համբաւներու համար. քանի սնդոր երեւակայութիւնս, դիւցաղանց շահատակութիւնքը նուագելու համար:

Ահ 'ի բաց կը թողում քնարս, տակաւին կոյս և անտխեղձ. հողմաց կը յանձնեմ հնչեցնել նորա լարքը. թող լռէ, վերջ տանք մեր տկար ջանից, որոնք լած են նորա հնչումը պիտի ներեն ինձի անցեալը. դիտնալով որ նորա դողդոջ՝ ձայնը վերջին անգամ կը թռթռայ:

Նորա երերուն և անհարթ մեղեդին շուտով պիտի մոռցուի, հիմա որ բարեկամութեան և սիրոյ վերջին հրաժեշտս կուտամ: Արջանիկ պիտի ըլլար բաղդս երանելի և վիճակս, եթէ իմ սիրոյ առաջին երգս ալ վերջինն ըլլար:

Ս'նասցես բարեաւ. Սուղայդ դեռափթիթ, զի ոչ եւս մենք զերար պիտի տեսնանք, եթէ տկար եղան մեր երգերը, գոնէ յոյժ բաղմնութիւ չեն. Յուսանք որ ներկայն մեղքաղքը ըլլայ, ներկայն որ կնիքն է մեր վերջին հրաժեշտին:

Ի զրո Պայրէն
Թարգմանեաց՝ Ն. Ճ.